# Ց Ա Ն Կ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

**Ուղղությունը** ***քաղաքաշինություն***

| Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարողը | Համակատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը | Հղումը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. “Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագիծ | Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է պատասխանատու պետական կառավարման մարմինների և ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովում ընդգրկված համակատարող այլ մարմինների համատեղ աշխատանքների արդյունքում ստեղծել | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | - | փետրվարի 2-րդ տասնօրյակ | չի պահանջվում | ՀՀ-ի կողմից 2004 թ մարտի 2-ին վավերացված Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիա, միջազգային պայմանագրեր, ՀՀ վարչապետի 2009թ հուլիսի 31-ի թիվ 650-Ն որ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորություննե րի կատարումն ապահովող իրավական հիմքեր: | | | | | |
| 2. “Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագիծ (ազդեցության գնահատմամբ) | Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է կտրուկ նվազեցնել ինքնակամ շինարարության դեպքերի քանակը և օպերատիվ ու արդյունավետ վերացնել դրանց հետևանքները: | ՀՀ քաղաքաշինությ ան նախարարությու ն | - | դեկտեմբե րի 2-րդ տասն-օրյակ | չի պահանջվու մ | ՀՀ կառ. 2010 թ փետրվարի 11-ի թիվ 5 արձանագրային որոշման 18-րդ կետ |
| 3. «ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման | Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ներդնել քաղաքաշինական գործունեության հատուկ | ՀՀ քաղաքաշինությ ան նախարարությու ն | - | մարտի 3-րդ տասնօրյա կ | չի պահանջվում | ,,Քաղաքաշինությա ն մասին,, ՀՀ օրենքի 10.1 և 19-րդ հոդվածներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| նախագիծ | կարգավորման բնագավառում համալիր կառուցապատման սկզբունքը, սահմանել համաձայնեցված կառուցապատման նախագծերի կամ սխեմաների նկատմամբ միասնական պահանջներ և չափորոշիչներ, պարզեցնել քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման գործընթացը և էականորեն կրճատել իրագործման ժամկետները: | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. «ՀՀ համայնքներում (բնակավայրերում) հանգստի, զբոսաշրջության և առողջարանային կենտրոնների կազմակերպման նպատակով առանձնացված տարածքներում քաղաքաշինական գործընթացների իրականացման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ | Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ՀՀ համայնքների /բնակավայրերի/ առանձնացված տարածքներում քաղաքաշինական գործունեության միասնական կառուցապատման սկզբունքների և չափորոշիչների կիրառմամբ, բնական պաշարների նպատակային օգտագործմամբ ստեղծել տվյալ տարածաշրջանի առանձնահատկություններին բնորոշ, բնակավայրի բնապահպանական, բնակլիմայական և պատմականորեն ձևավորված ճարտարապետական միջավայրին համահունչ ու գեղագիտական չափանիշներին | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | - | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | չի պահանջվում | ,,Քաղաքաշինության մասին,, ՀՀ օրենքի 10.1 և 19-րդ հոդվածներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բավարարող զբոսաշրջության, հանգստի և առողջարանային կենտրոններ, իրագործել ՀՀ համայնքների /բնակավայրերի/ տարածական զարգացման միջոցառումներ, ուղղված տեղի բնակչության զբաղվածության, զբոսաշրջության զարգացման և ենթակառուցվածքների արդիականացման գործընթացին: | | | | | |
| 5. ,, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N626-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,, ՀՀ կառավարության որոշման նախագիծ | Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ավարտված շինարարության շահագործման փաստագրման ընթացակարգի ժամկետների կրճատում և բազմաբնակարան | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | - | սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | չի պահանջվում | ,,Քաղաքաշինության մասին,, ՀՀ օրենքի 10.1 հոդված |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բնակելի շենքերի փոստային բաժանորդային պահարանների պարտադիր տեղադրման պահանջների ամրագրում: | | | | | |

ՀՀ քաղաքաշինության նախարար՝ Վ. Վարդանյան